թիւն կար. երեկոյեան, մօտակայ դպրոցի աշակերտները դալիս զբօսնում էին, սիրահարւում, հառաչանքներ քաշում. կիրակիները չտեսնուած եռուզեռ էր:

Այժմ ամէն ինչ այլուած է: Պատերի մի քանի կմախքներ են մնացել: Հողերը կուտակուել են, հիմքերը ոչնչացել: Փոշիները բարձրանում են հովերի շրթունքների մօտ եւ ուժասպառ պառկում անձրեւների ծեծի տակ:

Աւերանք եւ խեղճութիւն:

Երբեմն քաղաքից տխուր եւ մտազբաղ մարդիկ են դալիս, ձեռնափայտի ծայրով սահմաններ որոնում, լուռօրէն վիճում եւ էլ չեն վերադառնում:

Աւերակների ծայրին մէկը վերաշինել է իր տունը: Ամերիկայում ազգականներ ունի՝ փող են ղրկել: Գիշերները նա առատօրէն լուսաւորում է իր տունը, նստում պատշգամի առջեւ, եւ ձայնը գլխին, մելամաղձոտ թրքերէն երգեր երգում:

Ինչքա՜ն տխուր է այս ձայնը խաւար փողոցի ծայրին:

Մեր տանը կպած ուրիշ երկու երեք տներ կան:

Ինքնամփոփ հայ բողոքական ընտանիքներ են, որ Ամերիկան տեսած են: Տղամարդիկ երեկոյեան վերադառնում են, անխուսափելի դեղին պայուսակը իրենց ձեռքին, շտապ քայլով, լուրջ եւ մտազբաղ մտնում ներս: Մի քիչ յետոյ երգեհոնի ձայն է լսւում, եւ մարդ չի իմանում՝ աղօթում են թէ զուարճանում:

Տանտիրուհիներս, վաղուց որբացած, խոնարհ, այս բնակարանի ամսավճարով ապրող հայ օրիորդներ են: Դպրոց տեսած, բանաստեղծութիւնը սիրող, տխուր, նշանման սեւ աչքերով աղջիկներ:

Նրանք վարժ են երկարօրէն դիտել վերջալոյսերը, ծառի տակ նստել եւ երազել, առաջի բացուած կոկոնի չքեղութիւնով հրճուել, հարուստ ածականով ոգեւորուել:

Ու Սկիւտարը ամբողջովին այսպէս է: Նա ունի իր ուրոյն մտայնութիւնը, իր աւանդութիւնները: Նա դաւառ է եւ քաղաք:

Սկիւտարը սկիւտարցու համար դրեթէ հայրենիք է: Մնայուն, տոկուն մթնոլորտ կայ այստեղ, օդի, ծառի, տեսարանի եւ հոգիների հետ կապուած:

Այն ինչ որ անկարելի է թուում Պոլսում, կարելի է այստեղ:

Սկիւտարը վաւաշոտ չէ, այլ սիրահար է: Մեծ տրամութեամբ նայում է դէպի Ասիա, ոգեւորւում է Արեւմուտքով:

Այստեղ մարդը օժտուած է եղակի յատկութիւններով: Ձկուն է նրա բանականութիւնը, նուրբ է զգայողութիւնը եւ, Զամլճայի օդի նման, թրթռուն է սիրտը:

Խաղաղ եւ վերասլաց, երկինքի հետ խօսող, աստղերի հետ պլպլող, դաղափարը ընդգրկող տենչը կայ, որ, իրիկնամուտին, հեռուից եկող, բիւրեղեայ ջութակի ձայնն է յիշեցնում:

Սկիւտարը ամբողջ մի մտայնութիւն է հայ իրականութեան մէջ: Նոճին, աստղը, բլուրը եւ ծովը շղարշով վերջալոյսը՝ այդ մտայնութեան հիմնական նշանաբաններն են:

Դուրեանը՝ ամբողջովին հեւք է, սարսռուն մեղեդի, աստղերի շուրջը մելամաղձօրէն պտտող ոգի: Նրա տրամութիւնը բաղձանքներով լեցուն է, նրա հեկեկանքը թռիչք է եւ վշտոտ ցանկութիւն:

Ռ. Պէրպէրեանը՝ իդեալիստ եւ դաստիարակ: Բլուրը, որ պէտք է մագլցել, որ պէտք է զարդարել: Մի տեսակ միամիտ հաւատք, իր պարտէզում տնկած շոճիի նման՝ ըստ Տէնի, ամենամտաւորական ծառը:

Եղիա Տէմիրճիպաշեանն էլ այստեղից է: Ոռնող դերվիշի եւ յոյզ որսող մենակեացի տարօրինակ խորհուրդ: Հայ կեանքի ամենախորհրդաւոր ոգիներից մէկը: Շանթահարուած նոճի, որի մէկ ճիւղը վայր է ընկել դերեզմանի վրայ:

Պոլիսը նրա համար Գալաթիայի եկեղեցին է, որի առջեւ նա երկարել է իր մուրացկանի ձեռքը: Ա՜հ, բանաստեղծի չնդալից ապտակը հայ քաղքենիների դէմքին...

Եւ ահա ուրիշ մի մեծը. Ինդրան, Զրաքեանը: Ինչպէ՞ս կարելի է հասկանալ «Ներաշխարհը» առանց Սկիւտարի: Նոճաստանում քամիները թաքուն խօսքեր են ասում, երկնքի սեղանի վրայ հաղարաւոր մոմեր են վառուել, ծովը բարձրաձայն պատարագում է:

Զրաքեանը իր զոյացման ձեւը տեսնում է նոճիի դասական կառուցուածքի մէջ, իր եսը որոնում է խոնարհ բոյսերի անմիջական ճար-

Հայ մատենագրության թուանշանային գրադարան